

Առողջության և մարդու իրավունքների շաբաթը ԱՊՀ-ում. Միջազգային արշավ

06.04.2026 10:34



ՀՀ փաստաբանների պալատը՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հետ համատեղ իրականացվող միջոցառման շրջանակներում 2026 թվականի ապրիլի 6-ից 10-ը կմիանա «Առողջության և մարդու իրավունքների շաբաթը ԱՊՀ-ում» միջազգային արշավին: Միջազգային գործընկերության շրջանակներում իրականացվող միջոցառման ընթացքում նախատեսվում է հանրությանը տրամադրել անհրաժեշտ անվճար իրավաբանական խորհրդատվություն՝ մարդու իրավունքների պաշտպանության (ներառյալ առողջապահության իրավունքի), արդարադատության հասանելիության և այլ իրավական հարցերի վերաբերյալ:

Նշենք, որ միջոցառումը ներառված է ԱՊՀ մասնակից պետությունների հիմնական կազմակերպության 2026 թվականի ընթացքում փաստաբանության ոլորտում իրականացվելիք աշխատանքային պլանում:

Անվճար իրավաբանական խորհրդատվություն կտրամադրվի ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (Հասցե՝ Երևան, Զաքյան 7-2): Մուտքն ազատ է իրավաբանական խորհրդատվություն հայցող բոլոր անձանց համար:

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })